«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 46/02-1

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 31.05.2019թ. ժամը 17:00

Համաձայն ՀՀ Արդարադատության Նախարարությունից 10.04.2019թ-ի թիվ 15/7646-19 գրությամբ վերահասցեյագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 15.04.2019թ-ին ստացված,քաղաքացի Սամվել Խաչատրյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով,Միշա և Նվեր Բալյանների սնանկության գործով կառավարիչ՝Հենրիկ Մարտիկյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ **ս/թ-ի Մայիսի 02-ին,17-00-ին** ՝ ք.Երևան, Արշակունյաց 5 հասցեում, հրավիրվել էր «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստը:

Կարգապահական հանձնաժողովի նիստը հետաձգվել և նշանակվում էր՝31.05.2019թ-ին:

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի հետաձգված նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝քաղաքացի Սամվել Խաչատրյանը
Միշա և Նվեր Բալյանների սնանկության գործով կառավարիչ՝Հենրիկ Մարտիկյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝

Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
Քաղաքացիներ.Միշա և Նվեր Բալյանների սնանկության գործով կառավարիչ՝
Հենրիկ Մարտիկյանը
Դիմումատու՝ քաղաքացի Սամվել Խաչատրյանը պատշաճ ծանուցված էր բայց նիստին անհայտ պատճառնորով իր կամ իր ներկայացուցչի ներկայությունը չէր ապահովել:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. ՀՀ Արդարադատության Նախարարությունից 10.04.2019թ-ի թիվ 15/7646-19 գրությամբ վերահասցեյագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 15.04.2019թ-ին ստացված,քաղաքացի Սամվել Խաչատրյանի դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով,քաղաքացիներ Միշա և Նվեր Բալյանների սնանկության գործով կառավարիչ՝Հենրիկ Մարտիկյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ՝

Մինչև օրակարգի հարցի քննարկման անցնելը հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյանը առաջարկության համար ձայն վերցրեց և ներկայացնելով այն փաստը,որ օրակարգում ընդգրկված է իր,որպես սնանկության գործով կառավարիչի՝ վարքագծերի վերաբերյալ հարցի քննարկում, ինքը որպես հանձնաժողովի անդամ ինքնաբացարկ է հայտարարում և առաջարկում է քվեարկությունը կազմարպել առանց իր ձայնի:

Նիստի մասնակից հանձնաժողովի անդամները քննարկեցին ինքնաբացարկը,ընդունեցին այն ճիշտ և նիստի վարման կանոնակարգին համապատասխան ու հարցը դրեցին քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը և տեղեկացրեց նիստի մասնակիցների վերաբերյալ առ այն,որ դիմումատու քաղաքացի Սամվել Խաչատրյանը պատշաճ ծանուցված էր բայց հանձնաժողովի նիստին անհայտ պատճառներով իր կամ իր ներկայացուցչի ներկայությունը չի ապահովել:
Հանձնաժողովի նախագահն խնդրեց հանձնաժողովի անդամներին հայտնել կարծիք հանձնաժողովի նիստը առանց դիմումատու շարունակելու վերաբերյալ: «ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի ներկա անդամներից՝Ա.Ադամյանը արտահայտեց իր կարծիքը առ այն,որ եթե դիմումատուն պատշաճ ծանուցվել է հանձնաժողովի նիստի տեղի և ժամի վերաբերյալ և իր ներկայությունը չի ապահովվել,ուստի կարելի է ընդունել,որ նա իր դիմումում նշված փաստական հանգամանքներից և ներկայացված ապացույցներից ու լրացուցիչ փաստաթղթերից զատ այլ բան ներկայացնելու չունի և քանի որ քննվելու է սնանկության գործով կառավարչի հարցը ու կառավարիչը ներկա է նիստին, ուստի կարելի է նիստը շարունակել դիմումատուի բացակայությամբ,կարգապահական վարույթը շարունակելով դիմումում նշված փաստական հանգամանքների և ներկայացված ապացույցների շրջանակներում:
«ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի ներկա անդամներից՝Ռ.Խալաթյանը նույնպես արտահայտեց իր կարծիքը առ այն,որ դիմումատուն անցած նիստին ներկայացրել էր լրացուցիչ փաստաթղթեր և դիմումով հայտնել էր իր կարծիքը և ինքը նույնպես կարծում է որ նիստը կարելի է շարունակել առանց դիմումատուի:
Մյուս հանձնաժողովի անդամները քննարկեցին ստեղծված իրավիճակը և ընդունեցին առաջարկը նիստը սկսել առանց դիմումատուի՝ լսելով սնանկության գործով կառավարչի բացատրությունը և հետո ուսումնասիրելով ներկայացված ապացույցները,անդրադառնալ եզրակացության գալու հնարավորություններին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը՝ներկայացրեց դիմումը և ներկայացրած ապացույցները:
Կանոնակարգի համաձայն իր դիրքորոշումը և բացատրություններ ներկայացնելու համար ձայնի իրավունք տրվեց՝ Միշա և Նվեր Բալյանների սնանկության գործերով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյանին,ով ներկայացրեց հանձնաժողովին,որ ստանձնելով սնանկության գործերի վարույթներով ՍԳ կառավարչի պարտականությունները իր կողմից կատարվել են օրենքով սահմանված իր լիազորությունների իրացում,որը իր կողմից կատարվել է բարեխղճորեն և ամբողջական,մասնավորապես դիմում նշված հանգամանքների վերաբերյալ հայտնեց որ դիմումատուն հանդիսանում է սնանկության վարույթով պարտատեր և սնանկության վարույթների ընթացքում բազմաթիվ անգամներ հանդիպել է իր հետ,խոսել և տեղեկացել գործերի իրականացման ընթացքից,ծանոթացել է տարբեր փաստաթղթերի և ընդհանրապես միշտ եղել է տեղեկացված վարույթների ընթացքից,բայց քանի որ սնանկության վարույթներում դրամական միջոցներ չեն եղել և բաշխումներ չեն կատարվել եղել է միշտ չբավարարված և ժամանակ առ ժամանակ տարբեր մարմինների գրել է նմանատիպ

բողոքներ և դիմումներ:Այս դիմումն էլ հերդկանն է և նմանատիպ,այսինքն դիմումը իր մեջ չի պարունակում ոչ մի փաստ կառավարչի գործողությունների վերաբերյալ,ուղղակի նշված են դատական ակտեր դրանց կատարմանը վերաբերվող իր գնահատականները և տարբեր մարմիններին գրած իր դիմումները,որոնց իր կարծիքով ընթացք չի տրվել:Սույն բողոքին նախորդել է պարտատիրոջ կողմից նույնաբովանդակ ՀՀ Արարատի մարզի դատախազություն ներկայացված սնանկության գործով կառավարչի ապօրինի գործողությունների մասին «Հանցագործության մասին հաղորդումը»,որի քննությունից հետո գրավոր պատասխան է ուղարկվել դիմումատուին և զգուշացվել է որ հնարավոր սուտ մատնության համար պատասխանատվության մասին:

Ըստ էության պարտատերերի այդ թվում նաև Սամվել Խաչատարյանի հանդեպ պարտապանների ունեցած պարտավորությունների մարման համար այս պահին հայտնաբերվել է միայն համասեփականության իրավունքով պարտապաներին և մյուսներին պատկանող /5 անձ/ ք.Արարատ,Իսահակյան փող. 22շ.12բն.հասցեյի այշարժ գույքը,որից պարտապանների բաժնի առանձնացման և դրա վրա բռնագանձում տարածելու համար հայցադիմում է ներկայացվել դատարան,որը քննության ընթացքում է:

Ինչ վերաբերվում է դիմումատուի այն նշումներին թե իր կողմից չի տրամադրվում վարույթից տեղեկատվություն և նյութեր,ապա դա իրականությանը չի համապատասխանում,որովհետև ինչպես նշեցի նա մշտապես տեղեկացված է վարույթի ընթացքի մասին և իր դիմումներով ստացված նյութերն էլ օգտագործվում է բացառապես դիմում բողոքներ գրելու և դրանց տակ կցելու համար,որպիսի գործելավոճն էլ կառավարչի համար հանդիսանում է լրացուցիչ ժամանակի կորուստ,քանի որ ստիպված եմ այդ նույն մարմիններում գրել բացատրություններ տրամադրել նյութեր և բացատրել իրական փաստերը և օրենքով սահմանված կարգերը,որից հետո բուն վարույթով զբաղվելու ժամանակ չի մնում և խոչնդոտվում է կառավարչի բուն աշխատանաքը և լիազորությունների իրականացումը:

Կառավարիչը ներկայացրեց,որ նմանատիպ բողոքներ և դիմումներ պարտատիրոջ կողմից գրվել են պարբերաբար,որոնց վեաբերյալ ինքը դատարան և այլ մարմիններ ներկայացրել է համապատասխան գրավոր բացատրություններ,որը և այժմ ներկայացնում է հանձնաժողովին և նշեց որ բողոքի ոչ մի կետ չի համապատասխանում իրականությանը, մտածածին են և անհիմն:

Հանձնաժողովի անդամ՝Հ.Ադամյանը հարց ուղղեց կառավարչին առ այն,որ կառավրչի և պարտատիրոջ միջև եղել են արդյոք անձնական հանդիպումներ մինչև քննարկվող դեպքերը և կառավարիչը տրամադրել է արդյուք վարույթից նյութեր պարտատիրոջը այդ թվում նաև ֆինանսական վերլուծության վերաբերյալ:

Հ.Մարտիկյանը պատասխանեց,որ այո հանդիպումները եղել են բազմաթիվ անգամներ և պարտատերը հստակ ճանաչում է կառավարչին,ունի կոնտակտային հեռախոսային մշտական կապ և բոլոր հարցերին պատասխանելու կառավարիչի պատրաստակամությունը, բացի դրանից նրան տրամադրվել է տարատեսակ նյութեր սնանկության վարույթից,իսկ ֆինանսական վերլուծության վերաբերյալ նյութեր չի տրամադրվել,քանի որ պարտապանները հանդիսանալով ֆիզիկական անձինք չեն ներկայացրել ֆինանսական փաստաթղթեր և մինչ օրս էլ հնարավոր չի եղել պարզել նրանց ֆինանսական փաստաթղերի գտնվելու վայրը,որոնց միջոցով հնարավոր կլիներ կատարել ֆինանսական վիճակի վերլուծություն:Այսինքն ֆինասական վերլուծությունը կակտարվի փաստաթղթերի առակայության պայմաններում,որի արդյունքների վերաբերյալ էլ կտեղեկացվի պարտատիրոջը:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հայտնեց այն կարծիքը,որ կառավարչի կողմից կատարվել են «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 29-րդ,25-րդ և 56-րդ հոդվածներով նախատեսված ընթացակարգերը և նրա գործողությունները միտված են պահանջների բավարարման համար անհրաժեշտ միջոցների կիրառմանը,իսկ պարտատեր հանդիսացող բողոքաբերի կողմից ամեն կերպ փորձեր է կատարվում,այդ թվում նաև դիմում-բողոքների ձևով ուղղորդել կառավարչի գործողությունները:

Հանձնաժողովի նախագահն խնդրեց անդամներին գնահատել ներկայացված փաստական հանգամանքները,որի շրջանակներում հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյանը հայտնեց այն

կարծիքը,որ դիմում նշված փաստական հանգամանքները հիմնականում վերաբերվում են տարբեր դատական գործերի ընթացքին,կայացված դատական ակտերին,դատական ակտերի կատարման ընթացքին և կատարողների կատարմանը,դիմումատուի սեփական գնահատականների լույսի ներքո,որը հիմնականում չի համապատասխանում գործող օրենսդրությանը,ինչ վերաբերվում է ՍԳ կառավարչի գործողություններին,ապա այն «Սնանկության մասին»ՀՀ օրենքի հոդվածների նշումները,որոնց խախտման համար պահանջվում է կառավարչին ազատել զբաղեցրած պաշտոնից,այդ հոդվածների խախտումների փաստական հանգամանքներ դիմումատուի կողմից չի ներկայացվում ,բացի այն հանգամանքից,որ ինքը դիմել է և իրեն չեն ներկայացրել հանգամանքից և այդ փաստական հանգամանքները դիմումատուի կողմից աղավաղվում է և փորձ է կատարվում հանձնաժողովի մոտ ստեղծել սխալ պատկերացում կառավարչի գործելաոճի ու պահվածքի վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամը հայտնեց.որ իր կարծիքով կառավարչի գործողությունները բխել են օրենքից և իրենց մեջ կարգապահական խախտումներ չեն պարունակում և առաջարկեց կարգապահական վարույթը կարճել կառավարչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը նշեց,որ .ուսումնասիրելով դիմումը և ներկայացված փաստաթղթերը ակնհայտ է,որ պարատեր հանդիսացող դիմումատուն ձգտում է ամեն կերպ ստանալ պարտապաններից իր պահանջների բավարարումը և ինչքան հնարավոր է շուտ ու շատ:Այդ նպատակին հասնելու համար ,իր կարծիքով խանգարող կամ վատ /արագ ու իր բոլոր ցանկությունները/ չկատարող,հանգամանքներին այդ թվում կառավարչի գործողություններին վերբերվում է վերապահումով և գնահատում է իր տեսակետից: Բացի դրանից դիմում նշված կառավարչի կողմից դիմումներին չպատասխանելու և պարտապանին վարույթի ընթացքի մասին տեղեկատվություն չտրամադրելու փաստերը քննարկվել է դատարանում և դատարանը իր 11.05.2018թ-ի թիվ 4509/18 գրությամբ արտահայտել է իր դիրքորոշումը պարտավորեցնելով կառավարչին, պարտատեր Սամվել Խաչատրյանին «սեղմ ժամկետում պատասխանել դիմումատուին և դատարանին»,այսինքն առկա է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի /ժա/ կետի 2-րդ ենթակետի պահանջների թերի կատարում,որը և իր կարծիքով հանգեցրել է այս իրավիճակին:

Հաշվի առնելով դատարանի որոշումը, ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը և դիմումում շարադրված փաստերը հանձնաժողովի նախագահն մասնակի համաձայնելով արտահայտած կարծիքների հետ նշեց որ համաձայն «Սնանկության գործով կառավարչի Վարքագծի կանոնագրքի» 1.8.կետի ՍԳ կառավարիչը պարտավոր է իր գործառույթները իրականացնել բարեխղճորեն և արդյունավետ:

Այս պարագայում սնանկության գործով կառավարիչ՝Հենրիկ Մարտիկյանը իր կարծիքով իր գործառույթները կատարել է բարեխղճորեն բայց արդյունավետ չի ներկայացրել դրանք չապահովվելով վարույթի թափանցիկությունը և տեղեկատվության ճիշտ մատուցումը,մասնավորապես պարտատիրոջը,առաջարկեց «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5-րդ հոդվածի 5.1.կետի 5-րդ մասի հիմքով հայտարարել նախազգուշացում և հանձնարարել կառավարչին արդյունավետ իրականացնել «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի /ժա/ կետի 2-րդ ենթակետով նախատեսված լիազորությունները,ապահովվելով վարույթի թափանցիկությունը և տեղեկատվության բարեխիղճ տրամադրումը:

Հանձնաժողովի մյուս անդամները համակարծիք եղան առաջարկին և քվերկեցին՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. ՀՀ Արդարադատության Նախարարությունից 10.04.2019թ-ի թիվ 15/7646-19 գրությամբ վերահասցեյագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 15.04.2019թ-ին ստացված,քաղաքացի Սամվել Խաչատրյանի դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով,քաղաքացիներ Միշա և Նվեր Բալյանների սնանկության գործերով կառավարիչ՝Հենրիկ Մարտիկյանի գործողությունները /անգործություն/ օրենքին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝ միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդին «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 հիմքով Միշա և Նվեր Բալյանների սնանկության գործով կառավարիչ՝Հենրիկ Մարտիկյանին հայտարարել բացահայտված խախտումը վերացնելու վերաբերյալ նախազգուշացում և հանձնարարել կառավարչին արդյունավետ իրականացնել «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի /ժա/ կետի 2-րդ ենթակետով նախատեսված լիազորությունները,ապահովվելով վարույթի թափանցիկությունը և տեղեկատվության բարեխիղճ տրամադրումը:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյան